ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԽԱՉԻԿ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻՑ

Հնագետ, ժողովրդագետ, բանահավաք, Խաչիկ ծայրագույն վարդապետ Դավթանը (1863–1936) նշանակալից ավանդ ունի վիմագիր արձանագրությունների հավաքման ասպարեզում: Իր պաշտոնական ու նպատակային շրջագայությունների ընթացքում նա մտադրություն է ունեցել Ղարաբաղին նվիրված ժողովրդագիտական աշխատություն գրել և, ըստ այդմ, ընդօրինակել ու վերծանել է տասնյակ արձանագրություններ բուն Ղարաբաղից և այլ վայրերից: Խ. Դավթանի վիմագիր ժառանգության մի մասը լույս է տեսել «Արարատ»[1], «Բանասեր»[2] ամսագրերի էջերում, սակայն մի մասն անտիպ է և գտնվում է Հայաստանի ազգային արխիվում (ֆոնդ 319):

Ստորև ներկայացնում ենք մի փունջ վիմագրեր Խ. Դավթանի ֆոնդից, երկու այլ վավերագրերի հետ, որոնք ունեն պատմական որոշակի արժեք և կազմված են 1892 թ. Ղարաբաղի Շոշ գյուղում ու մերձակայքում (գ. 6): Նշենք, որ ցարդ Շոշ գյուղից մեզ հայտնի է երկու արձանագրություն Մ. Բարխուտարյանցի հրատարակությամբ[3], որոնցից մեկը՝ Ե. Լալայանի վերահրատարակությամբ[4]: Արձանագրություններից մեկը թվագրվում է 1458 թ., մյուսը՝ 1655 թ.: Վերոհիշյալ երկու արձանագրությունները և երեք այլ թվակիր բեկորներ (1651, 1655, 1662 թթ.) լույս են տեսել «Դիվան հայ վիմագրության» V պրակում[5]:

Վավերագրերը հրատարակվում են ըստ բնագրերի ուղղագրության: Վավերագրերում նշված հայկական տոմարի թվականներին պետք է գումարել 551:

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ

№ 1

1892 թիւ 19ն սեպտեմբերի ի Շուշիքենդ, շաբաթ, Թովմաս քհ ՏՐ Գրիգորեան 66 ամաց. Պետրոս քահայ Չլնկարեանց, Բալասան Չլնկարեանց 56 ամաց: Մանաս Ասրեանց 26:

---

[1] *«Արարատ», 1895, մայիս, էջ 233–234:*

[2] *«Բանասեր», 1901, հ. 3, պր. Բ,Գ, էջ 31, 135–147:*

[3] *Մ. Բ ա ր խ ո ւ տ ա ր յ ա ն ց. Արցախ, Բագու, 1895, էջ 132:*

[4] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 31:*

[5] *Դիվան հայ վիմագրության, պր. V, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 145–146:*

Ցուցմունք

Հին ազգեր Շուշիքենդում. բնիկ՝

1. *Յարամիշեանք 7 տ., Թոխտամիշանք ու Բագունք 3 եղբայրներ մի ազգից են,*
2. *Չալունք եկած են Թեղասեռա 13 տ.,*
3. *Ըզարանք 8 տ., Ըբարանք Աբարանից եկած են 5 տ.,*
4. *Օսմանանք եկած են Օզմանլուրից 5 տ. (Աթամալունք, Մելքումանք),*
5. *Թորոսանք 11 տ. (Սարիբեկը իրանց օջախն է),*
6. *Կյունդուզանք 5 տ.,*
7. *Կյուլուսարանք 4 տ.,*

հին ազգ են. Կյուքյու քյոխանք 16 տ., Դավիթյանք 18 տ., Եկանոնք 17 տ., Եսոնք 8 տ., Մյուլքունք 4 տ., Տերունք 11 տ.,

8. *Տլլաքանք 9 տ.,*
9. *Խնբաղանք 6 տ.,*
10. *Ջլավանք 15 տ.,*
11. *Կարաքունք 11 տ.,*
12. *Ժամհարանք 7տ., Շախանանք (հայացած թուրք) 6 տ.,*
13. *Չինկեորանք 14 տ.,*
14. *Ղովանանք 4 տ.,*
15. *Թոխունք 11 տ.*
16. *Թարխանանք 18 տ., որից 11 տուն ազատ են, իսկ 7 տուն Մակունք՝ հարկատու,*
17. *Խռատանք Ջրաբերդից 7 տ.,*
18. *Քոչունք Մոշխմհատից, Բայազետից... 4 տ.,*
19. *Մուսանք 5 տ. (այս ազգի մեջ և Բլլվանք),*
20. *Ծրտորանք 3 տ.,*
21. *Պուդուսանք Գորիսից 2 տ.,*
22. *Սրվնանք 3 տ.,*
23. *Ղազունք 5 տ.,*
24. *Կրզիր ըկուփանք 5 տ.,*
25. *Սև ըրիցանք 5տ.,*
26. *Մալումազանք 2 տ. (Նևկուց եկած),*
27. *Կյալունք Հարավ (Գորիսից հարավ) 2 տ.,*
28. *Սրչանք Չրաբերդոնց 11 տ.,*
29. *Նասիբանք 5 տ.,*
30. *Ատիբեկանք 6 տ.:*

Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 319, գ. 6, թ.1 և շրջ.:

№ 2

Այս ազգի ջաղացի ղաբուլան՛ է որ օրոյն է թվն ռմխա յին [1241]:

Այս գուրուս պատուջառն. այս է որ ես հաթամիս ասրիս զեյնալիս մէլքումնս կրիքոս շարս ետ է ախպէրս որ զօնէթօր[**] ափէն քարս ջէղեցէնք ջեղաց շինեցէնք է պաժին էրենք որ բ երկուսն մէլքումնին են պաժին մին պաժն հաթամին մին պաժին ասրին մին պաժին զեյնալին լինի փայն է բայնայն է է պաժին այնենք որ էլ ետու առաջ դավի այնենք աթիլ պաթիլ[***] լինի [368] հայրապետաց նօզօվաց լինի խաչատույր պետին վկյ ղալաք ալայվերդին վկյ չալուն տղղ թունին վկյ ծատուր վկյ սարուխան վկյ ենան վկյ միրզայնիէն վկյ ղաղայն վկյ մէլքումն տղեն վկյ խնազար վկյ եարամիշին տղայ թունին վկյ տէր միքէլն վկյ տր հարութունս վկյ քսպրն վկյ

Ես տէր հարութունս զերեցի վկյ:

ՀԱԱ, ֆ. 319, գ. 6, թ.1:

№ 3

Շուշիքենդի գերեզմանատուն

1. յիշատակ է տր խաչս յախումի որդի ետկարին ով որ կարդայ ած օղորմի ասէ թվին ռճլբ (1132)

Խաչքարեր

2. թվ ջծէ (937) միւսը թվ ջ (900)
ես մաթիոս էրէց կանկնեցի զխաչս փրկ ՑՒ հզյ հօ[ր]ն իմ շիումին

3. Ես Բարսեղ երեցս կանկնեցի զխաչս փրկութիւն հոգոյ հօրն իմ մու-րատին մօրն իմ և եղբօրն ...[****] թվ ջկ (960)

4. Ես տր վարտանս կանգնեցի զխաչս ի փրկութիւն հօգոյ հօրն իմոյ Բարսեղին և մօրն ... Խաթունին եղբօրն իմոյ ահբարին

5. Այս է տապան Հէրիքնազին որ է տստիրն մէլիք յաթամին ևխբայր մէլիք Մեծլումին թվ. ռմխա (1241)

Եկեղեցւոյ արևմտեան լուսամուտի խաչի գիրը.

---

[*] Ղաբուլա - համաձայնություն: Բնագրում տրված է ազգերի ցուցակի 7-րդ համարից հետո, բայց պարզ չէ, թե որին է վերաբերում:

[**] Անհայտ բառ:

[***] Աթիլ պաթիլ - անեծք է:

[****] Այս և հետագա բացթողումներն ընդօրինակողինն է:

6. Թվ ջե (905) ես ղոչս կանգնեցի խաչս հոգոյ մօր իմոյ գոցա բաջի զայս

Եկեղեցւոյ հարաւային պատի տակ.

7. Այս է տապան ի քր հանգուցեալ ԻԱՅ Խանաշէ դուստր որ է թրըղեցի իւ մէլիք ատամի կօղակից մարիամին թվն ռմժա (1211)*

Հանգստարանում եկեղեցւոյ հիւսիս արևելյան կողմում մեծ տապանների գիրը.

8. Թվ ռմլզ (1136) Ո դ ի ովանէսին յիշատակ է դարին խանո

9. յիշատակ է խաչս սալվաին թ-ի ռմլզ (1136)

*10. յիշատակ է տապանս Թարխունին ու պակումին թվ. էր ռմկբ** օվ որ կարդայ ած ողորմի ասէ*

*11. Այս է տապան փահլուեցի*** տր անտոնին ի ռմձա թվին (1181)*

12. Խաչս յիշատակ է պետրոսի որդի Գրիքորին թվ. ռմխբ էր (1142)

Մեծ երկար խաչքարի գիրը.

13. թվ ջկէ (967) ես ... հօրն իմ իշխան և մօրն ազիզին թվ ջկէ

ՀԱԱ, ֆ. 319, գ. 6, թթ. 2–3:

---

* *Թըրղի - թերևս, Թրլղու. գյուղ՝ Ղարաբաղի Մարտակերտի շրջանում, Խաչեն գետակի ափին:*

** *Թվականը թվերով չի նշված՝ 1162:*

*** *Փահլուլ - գյուղ՝ Շուշիի մերձակայքում. թուրքերն այն ավերել են 1919 թ. հունիսի սկզբներին:*